

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

09.08.2013



ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանը աշխատանքային այցելությունների շրջանակներում հանդիպել է մարզի մի շարք համայնքների առողջապահական և կրթական հիմնարկների տնօրենների, ինչպես նաև տվյալ համայնքների ղեկավարների հետ:

Մարզպետը նախ այցելել է Ջորավան համայնք, որտեղ ծանոթացել դպրոցի վերանորոգման աշխատանքների ավարտական փուլին, գրուցել է շինարարների և դպրոցի տնօրենի հետ՝ տվել է համապատասխան ցուցումներ:

Այնուհետև մարզպետն այցելել է Արագյուղ համայնք, որտեղ հանդիպել է գյուղացիներին և գրուցել է նրանց հետ գյուղում անհրաժեշտ լուծում պահանջող առկա խնդիրների վերաբերյալ, որից հետո մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարել է ծառացաց հարցերի շուրջ տալ եզրակացություններ հետագա աշխատանքների ծավալները հստակեցնելու նպատակով: Արագյուղում մարզպետը այցելել է նաև բժշկական ամբուլատորիա, այնտեղ ծանոթացել է մինչ օրս ընտանեկան բժշկության կատարելագործման ուղղությամբ ամբուլատորիայի բժիշկների կատարած աշխատանքներին, իսկ աշխատակազմին տվել է համապատասխան հանձնարարականներ և ցուցումներ:

ՀՀ Կոտայքի մարզպետը Սարալանջ համայնքում կատարած այցելության շրջանակներում այցելել է տեղի հիմնական դպրոց, որտեղ ծանոթացել է դպրոցի շենքի առկա վիճակին:

Կ. Շահգալոյանը աշխատանքային այցելության վերջում հանդիպել է Բուժական համայնքի ազգաբնակչությանը, այնուհետև այցելել է գյուղի միջնակարգ դպրոց, որտեղ ծանոթացել է շինարարական աշխատանքների ավարտական փուլին, որից հետո տեղի է ունեցել մարզպետի աշխատանքային հանդիպումը Բուժականի բժշկական ամբուլատորիայի աշխատակիցների հետ: Մարզպետն ամբուլատորիայում քննարկել է ընտանեկան բժշկության զարգացման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացմանը վերաբերող հարցեր: